

ԵՐԵՎԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 4

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мелкъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԱՄԱՐԱՅԻՆ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԳՐԻԳՈՐ ԶՕՐԵԱՆՑԻ

մանը, յայտնում են, որ յուզարկաւորութիւնը տեղի կունենայ այսօր. փետրվարի 4-ին, առաւօտեան ժամը 10-ին, դէպի Թանգոյեանց ա. Աստուածածին եկեղեցին, իր քակա-րանից՝ Մեղայեան պրօպ., № 79, Թաղումը Խօյիվանքի գերեզմանատանը:

ԲՈՒՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Քաղաքական տեսութիւն.—Ներքին, ՏԵՍՈՒ-թիւն. Հայոց ներկայացումները. Քաղաքացի-ոգիներ. Մեծ երկրաշարժի տարեգրծին. Նա-մակ Մօսկվայից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նա-մակ Գերմանիայից. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՆՈՒԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱ-ՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Իգմէ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Քաղաքական մամուլը անհանգստու-թեամբ է նայում այն եղելութիւններին, որոնք տեղի ունեն մերձաւոր Արեւելքում: Մակեդոնիայի սահմաններում սկսած յուզ-մունքները եւ խլրտումները ոչ միայն չեն դադարում, այլ և զարգանում են օրէցօր, ստանալով նորանոր արտայայտութիւններ: Ինչ կը լինի զարնանք ոչ որ չէ կա-րող ասել: Բայց բռնկվող նիւթերի քա-նակութիւնը այնքան մեծ է, որ պետու-թիւնները ստիպված են լարված ուշա-դրութեամբ հետեւել տեղի ունեցող անց-քերին, որպէս զի ականատես չը լինեն անսպասելի արկածներին եւ խոշոր միջադ-գային ընդհարումներին:

Շատերը երկրիչ են յայտնում, որ յուզ-մունքները կը վերջանան պատերազմով: Այդ երկարութեան հիմը ծառայում է

այն հանգամանքը, որ մակեդոնական շար-ժումները սկսվել են վաղուց և մինչև այժմ մի կերպ զարգւում էին, բայց այժմ դուրս են եկել իրանց սովորական դու-թիւնից, զրգուել են աղբաբնակութեան բոլոր խաւերը, վրդովել են հասարակաց հանգստութիւնը և տուել են մի շարք զոհեր, որոնք վրէժ են պահանջում: Ազի-տացիայի համար հող է պատրաստված, որից կաշխատեն օգտվել մակեդոնական շարժման ղեկավարները:

Սակայն Եւրոպան չէ ցանկանում պա-տերազմ: Նա վախենում է, որ մի կէտում սկսված պատերազմը առաջ կը բերէ այն-պիսի դրութիւններ, որոնց շնորհիւ պէտք է պետութիւնների մէջ առաջ գայ այն-պիսի տարաձայնութիւն, որ պատճառ դառնայ նոր բարդութիւնների և նոր ընդ-հարումների: Եթէ կան պետութիւններ, որոնք պատրաստ են ամեն տեսակ ձեռնու-մունքներով մտնելու պետութեան մէջ, միւս կողմից կան պետութիւններ, որոնք շահ ունեն Թիւրքիայի անձեռնմխելիութեան մէջ և կը գերադասեն ապստամբողների և դժգոհների ձեռնումը, քան Թիւրքիայի հեղինակութեանը որ և է փնտ հասցնելը:

Թուշիակի մերձաւոր ապագան—անկա-րելի է, բայց մի բան պարզ է, որ խոս-

ցակայութեան ժամանակ բարեփոխում Իգմէն կայցելէ ամեն մի տուն, քաղցրութեամբ դրոյց կանէ կանանց հետ, իսկ երեսներին հէքիաթ կը պատմէ, թէ ինչպէս զարհուրելի կախարչ Սիւլվէն ապրում է արձաթէ ապարանքի մէջ, Վուսկա գետի յատակում...

Հետո, յայտարարում ամեն ծայրերը հառա-գեղեցիկ Իգմէն անսպառ բարութեան և չքա-ղութեան համար: Լսեց նրա մասին և հզօր վեհալիքը հեռու արեւմտեան երկրում: Սա ցանկացած տեսակ գեղեցկութեան, և իր քաջա-մարտիկ գրահաւորված ընկերների հետ ճանա-պարհ ընկաւ դէպի միջին լեռներ, կանաչ մա-ռապատ քարերի և մանր սանդղեր թափող բարձրադաշտ եղևինների միջև: Ամենքը սի-րում էին այդ աղջկան, և սա նոյնպէս սիրում էր ամենքին: Պատանիներն ուրախանում էին գեղեցկութեան տեսնելու, ծերունիները հպար-տութեամբ էին արտասանում նրա անունը. երգիչները հիւսում էին ի պատիւ նրան քաղց-րահիւն տաղեր, որոնց երգում էր ամբողջ երկիրը, «Կանտէլէի» լարերի վրա խաղալիս:

Գեղեցիկ, երիտասարդ Իգմէն բոլորի համար ցանկալի հիւր էր, որովհետեւ բոլորին նա տա-նում էր իր հետ սփոփանք և ուրախութիւն: Ամեն մէկի համար նա կարողանում էր գտնել մի քնքոյշ խօսք և ամենատխտու սրտերի մէջ իմանում էր բոլորը յուսոյ վառ կայծը:

Խոնջացած հողագործն Իգմէնի հետ հանդի-պելիս ուրախ ժպտում էր, պահ մի մոռանա-լով իր աշխատանքի ծանրութիւնը: Ձկնորը խաղաղ սրտով իր մակոյկը մղում էր մորկա-յոյզ ծովը, երբ Իգմէն նրան աշուղութիւն էր ցանկանում: Ուրտորդին այլ ևս փոռնաւոր էին երեւում սեպածն ժայռերը և սարերի ձիւնախառն բուքը, թէ՛ գեղեցկութիւն նրան ժպտում էր ճանապարհում:

Նրանք ամենքն իմանում էին, որ իրանց բա-նակայութեան ժամանակ բարեփոխում Իգմէն կայցելէ ամեն մի տուն, քաղցրութեամբ դրոյց կանէ կանանց հետ, իսկ երեսներին հէքիաթ կը պատմէ, թէ ինչպէս զարհուրելի կախարչ Սիւլվէն ապրում է արձաթէ ապարանքի մէջ, Վուսկա գետի յատակում...

Իգմէնը ամեն ծայրերը հառա-գեղեցիկ Իգմէն անսպառ բարութեան և չքա-ղութեան համար: Լսեց նրա մասին և հզօր վեհալիքը հեռու արեւմտեան երկրում: Սա ցանկացած տեսակ գեղեցկութեան, և իր քաջա-մարտիկ գրահաւորված ընկերների հետ ճանա-պարհ ընկաւ դէպի միջին լեռներ, կանաչ մա-ռապատ քարերի և մանր սանդղեր թափող բարձրադաշտ եղևինների միջև: Ամենքը սի-րում էին այդ աղջկան, և սա նոյնպէս սիրում էր ամենքին: Պատանիներն ուրախանում էին գեղեցկութեան տեսնելու, ծերունիները հպար-տութեամբ էին արտասանում նրա անունը. երգիչները հիւսում էին ի պատիւ նրան քաղց-րահիւն տաղեր, որոնց երգում էր ամբողջ երկիրը, «Կանտէլէի» լարերի վրա խաղալիս:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

Կիրակի, յունվարի 2-ին, Թիֆլիսի հայոց դրամատիկական խումբը ներկայացրեց Մու-րադանի «Ուզան» պատմական դրաման հինգ գործողութեամբ և ութ պատկերներով: Ներ-կայացումը տեղի ունէր ցերեկով Արտիստա-կան ընկերութեան թատրոնական դահլիճում:

Մենք կանգ չենք աւելի պիեսի բովանդակու-թեան վրա, որ վաղուց արդէն յայտնի է հա-ւաարկութեան: Պիեսը ներկայացվեց խմբի բոլոր ոյժերով, Արտիստական ընկերութեան չքեղ դէկորացիաներով: Պիեսի մէջ թույլ են գեղարուեստական տարրը և դրամատիկական մշակումը, բայց կան գիրքեր, մի շարք դերեր, որոնք դաժնում են պիեսը հետա-քրքրական ամբողջի համար: Կան յաղթողներ, յաղթողներ, հերոսներ, մատնիչներ, գերիներ, սուր և նիզակ, հայոց և թշնամու զօրքեր, հայրենասիրական կոչեր, գեղեցիկ աղջիկ, սի-րահարներ:

Սիրանույշ կատարում էր Ռուզանի դերը: Նա աշխատում էր դերի մէջ մտնել դրամատի-կան յուզմունքներ, բայց բաւականաչափ նիւթ չունէր իր ձեռքին այդ անկու համար, ուստի նա աւելի տպաւորութիւն գործեց իր հայրե-նասիրական աւելի արտայայտութեամբ: Լաւ կը լինէր, եթէ Ռուզանի զգեստը չը մնար մի և նոյնը ամբողջ դերակատարութեան ժամա-նակ:

Բայց լեռնի երկրում ապրող մարդիկ մահից գերազանց էին համարում Իգմէնի զրկվելը:

—Ըք քանքան ամբողջ երկիրը,—սպառնում էր Վեստլինը,—քար քարի վրա չեմ թողնի,—կը կոտորեմ բոլոր մարդկանց, եթէ Իգմէն ինձ հետ չը գայ:

Եւ նա հաւաքեց իր ընկերներին ջրառատ Վուսկայի ափին, որ այստեղից արշաւանք սկսէ դէպի լեռնի երկիրը:

Այն ժամանակ Իգմէն դուրս եկաւ իր թագա-տարանից:

—Ինչո՞ւ ես ուզում եմ իմ հայրենիքի աղ-քատ (սարդկանց) սիրտիսը և ուրախութիւնը,—հարցրեց աղջիկն ասպետ Վեստլինից:

—Ո՞չ որ չը պէտք է ուրախանայ, կը վեհա-լիքը տխուր է,—բարկութեամբ պատասխա-նեց ասպետը:

—Լսի՛ր, չար վեստլին, թէ ի՞նչ կասեմ քեզ,—բացականչեց Իգմէն,—զարհուրելի վիճակ է սպառնում քեզ, եթէ համարձակվու ինձ ոյժով սպանել:

Բայց ասպետ Վեստլինը չը վախեցաւ աղջ-կայ մարդաբանութիւնից: Ձեռքով նշան արաւ և հրամայեց Իգմէնի առնել:

Իգմէնը Գրամու արագութեամբ գեղեցիկ աղ-ջիկը հերթաբան վազեց դէպի Վուսկայի ափը: Ո՞վ Սիւլվէն, թագաւոր ինձ,—բացականչեց նա և իրան զգեց սրնթաց աղբների մէջ:

Մերձենի կախարչ Սիւլվէն եկաւ Իգմէնի օգ-նութեան Իգմէնի նա առաւ իր թեւերի վրա և տարաւ թագաւոր արծաթէ ապարանքի մէջ, Վուսկա գետի յատակում:

Բարձրաձայն աղաղակեց քաջարի վեստլին-ը, խթանները կոխեց իր ձիւն կողերը, ցան-կանալով նոյնպէս մտնել Սիւլվէնի աշտաթէ ա-պարանքը: Ընկերները հետեւեցին նրան, բայց հազիւ էին մտնել ափին, երբ բարձրացաւ մի զարհուրելի աղմուկ, որից օրօրվեցին հզօր

Մենք կանգ չենք աւելի պիեսի բովանդակու-թեան վրա, որ վաղուց արդէն յայտնի է հա-ւաարկութեան: Պիեսը ներկայացվեց խմբի բոլոր ոյժերով, Արտիստական ընկերութեան չքեղ դէկորացիաներով: Պիեսի մէջ թույլ են գեղարուեստական տարրը և դրամատիկական մշակումը, բայց կան գիրքեր, մի շարք դերեր, որոնք դաժնում են պիեսը հետա-քրքրական ամբողջի համար: Կան յաղթողներ, յաղթողներ, հերոսներ, մատնիչներ, գերիներ, սուր և նիզակ, հայոց և թշնամու զօրքեր, հայրենասիրական կոչեր, գեղեցիկ աղջիկ, սի-րահարներ:

Սիրող

ԲԱՐԱՅԱՍԾ ՀՈԳԻՆՆԵՐ (Նամակ Երևանից)

Դաժան ձմեռը շարունակվում է. բնութիւնը սպիտակ սաւանով ծածկած, փափուկ գետինը սառած, քարացած և առու ու առուակ սառու-ցով պատած կարծէք միաբանութիւն չունի, որ սառնամանիքների թագաւորութիւնը դեռ չէ անցել: Այո, դեռ չէ անցել, դեռ իշխում է նա ամեն տեղ, դեռ սեղմում, կուչ է բերում ա-մենքին, բարբի թողնում հեռու ձա՞մարդին, ձիւնի տակ ինքզինքն մնալով անցորդին, բայց բոլորը ժամանակաւոր է, այդ բոլորը մի օր կը չքանայ, ահա այն յոյսը, զարնան այն յոյսը, որը մարդուն դարձնում է դիմացկուն, մաքառող, բնութեան դէմ: Ձը լինէր այդ յոյսը, անկա-լութիւնը, մարդիկ կընկճվէին, կը յուսահա-տվէին և նրանք կհաղթէին գերեզման կիշնէին:

Եղևինները:

Այդ ծերունի Սիւլվէն էր, որ բարկացաւ: Նա չարժեց Վուսկայի հունը, որը յանկարծակի յաճացաւ դէպի խոր անդունդները: Յեղե-ղուտ յորձանքով շուրջ դիմաւորեց ասպետին և ընկերներին, շարունակ յատակից պոկած բազմաթիւ քարեր:

Ահից դողաց Վեստլինից ուղղի երկվարը: Ձը հնազանդվեց իր տիրոջ, կանգ առաւ բարձր ապառաժի զլխին, ոտներով ամուր յենվեց հաստատուն հողին: Կատաղած ասպետը սուրը շողացրեց կենդանու գլխին... Յանկարծ գե-տինն օրօրվեց և բարձր ափերը ցած իջան մարդկանց և ձիւնի հետ դէպի ջուրը: Բար-կանցիտ Սիւլվէն նրանց խփեց փրփրադէղ ա-լիքներով, և քաջ ասպետ Վեստլինից իր ըն-կերների հետ քարացան անից:

Այսպէս անմիտ ասպետ Վեստլինը գրկեց լեռնի երկիրը գեղեցիկ Իգմէնի Երգիչները բազմաթիւ տաղեր յօրինեցին ի յիշատակ այդ կորստի. այդ երգերի մէջ միշտ գոված են չքացած Իգմէն: Բարութիւնը և չքնաղու-թիւնը, սակայն այդ ժամանակից ի վեր միշտ տխրագին հնչեցներն են արձակում «Կանտէլէի» քաղցրահիւն լարերը: Դրա փոխարեն ամբողջ երկրում այժմ լսվում է ջրվէժի յարատև վշտը: Գը—գա Իգմէնն է, որ շարունակում զրուցել իր սիրեցեալ աղջիկ հետ: Եւ ազգը հաւատա-ցած է, որ կը գայ մի օր, երբ սրնթաց յոր-ձանքը կը փչէ անշարժ կանգնած քարերը, երբ Սիւլվէն կազատէ բանտարկեալ Իգմէնին: Եւ նորից չիլահեր աղջիկը ուրախուրան կը վերադառնայ միջին լեռնի, կանաչ ամառապատ քարերի և մանր սանդղեր թափող եղևինների երկիրը...

Թարգմ. Գ. Օ.

Բայց արդեօք մենք կարող ենք անցողական, ժամանակակից համարել այն ցուցիչը, այն ստույգը, որը իր ամբողջ ուժով այսօր թափափվում է մեր ժողովրդի հոգու մէջ։ Մենք նայում ենք մեր շուրջը, մեր ժողովրդի զանազան խաւերին, նրա զգացմունքներին, սրտի աշխարհում կատարվող երեւոյթներին, և միութեամբ կան բան չենք նշարում։ Կարծէք մի սոսկալի ձեռք իր կործանիչ սառնամանիքներով խփելը անցել է այդ ժողովրդի սրտի միջով, հոգու խորքերով, թոյնոտ, զգայուն մկանունքների տեղ զննելով մի քար, մի ժայռ։ Իսկ դրանից այն կողմը այլ ևս գոյութիւն չունի հասարակաց չափ, բարի գործի պաշտամունքը, այլ եսական, զեռն չափեր, անձնական վայելչութիւն և ուրիշ ոչինչ։

Գաւառական մեր լճացած կեանքը, որը երբեմն միայն կենդանութեան նշաններ է ցոյց տալիս, այժմ մի սպանիչ տպաւորութիւն է գործում։ Քարացումն սրտի, զգացմունքների, քարացումն հոգու մէջ։ Ամբողջ տարին անցնում է, մի ամբողջ հասարակութիւն կարիք չէ զգում կարմիրակրկելու մի ներկայացում, գրական մի երեկոյթ կամ դասախոսութեան պէս մի բան։ Միջին, արեւմտաւոր դասակարգը—մեր ժողովրդի ամենազրկւածը տարբեր, ծանրաբեռնված իր առօրեայ հոգերով, մի լաւ բան սպասում է աւելի ձեռնհաս մարդկանցից, իսկ ձեռնհաս մարդիկ—խնտիկներու դասակարգը, ստուարացնելով հարուստ աղայական դասակարգը, գնում լցնում է այն տներն ու հրաւերները, որտեղ կանանց սեղանը բռնում է առաջին տեղը։

Յունվարի 4-ին Ալեքսանդրօպօլում մի բռնու վրացիներ տալիս էին երբորդ վրացերէն ներկայացումն և չը նայած որ նրանք բնւ էին հանել մի պահագրութեան պիէսա, կարծեմ Վիտի-րանի, որտեղ գուրս է բերված մի կեղծող հայի տիպ, յաճախորդներից մի որդ մասը հայեր էին, մինչդեռ հայերը մի կիսատ ներկայացում հազիւ գլուխ էին բերել։

Երևանում վերջին երկու շաբաթների ընթացքում վրացիները տեսելին մի երեկոյթ բարեգործական նպատակով, թուրքերը տեսելին թուրքերէն լեզուով մի ներկայացում, —սեյքէն, Երևանի թուրքերը,—իսկ հայերը զբաղված էին թղթախաղով։

Բայց միթէ չը կան Երևանում և առհասարակ մեր գաւառական քաղաքներում այնպիսի երիտասարդներ, որոնք աւելի մօտ կանգնած լինելով ժողովրդի չափերին, գտնէ ծածկէին այդ բացը։ Այո, կան, բայց ինչ համեմատութիւն դրանց թիւի և այն դասակարգի մէջ, որը դասնում է աղայական պաշտամունքը և բաղդ որոնում թղթախաղի մէջ։ Այդ դեռ չինչ, փորձեցէք դատաւարաբար ինտելիգենցիայի այդ ընթացքը, նա ձեռ անհայտ թշնամին կը դառնայ, նա կը հայոյէ ձեռ ամենամոտերական զգացմունքները։ Եւ այդ է պատճառը, որ այսօր գուցէ չը կայ մի լաւ ձգտում, մի լաւ քայլ, որ իր թշնամիները, իր հայոյողները չունենայ։

Սանձարձակ զրպարտութիւն, անսօթ չաբախօտութիւն, ստոր ու նողկալի բաժնասանք այն մարդկանց հասցէին, որոնք փորձում են մի բարի գործ, մի լաւ քայլ անել։ Մի խօսքով ամենամաքուր մարդը մի օրում, մի վայրկեանում, բարեամտներին, զրպարտութեան զօր կը դառնայ, եթէ չը յարեց այդ մարդկանց, եթէ նա չը համակրեց նրանց ընթացքը։

Ի՞նչու է այդպէս։ Այնտեղ, ուր թուլւում են բարոյական հիմունքները, ուր ընդհանուր չափ տեղի է տալիս անձնական եսական շահերին, այնտեղ հոգին կորցնում է իր աստուածային յատկութիւնը, նա դառնում է դատարկ, անբովանդակ, այնտեղ բռն են գնում սառնամանիքն ու քառացումը։

Ահա այդ քարացած հոգիները խեղդում են մեր կեանքը։

Ա. Դ. Ե.

ՄԵԾ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՏԱՐԵԴԱՐԶԻՆ (Նոտակ Շամախուց)

Յունվարի 28-ին

Քաղաքի քան երեք հազար ժողովրդի սրտին պատած սև թախիծը, դէմքի յուսահատ արտայայտութիւնը, այսօր միայն, աղետալի երկրաշարժի տարեդարձի չէմքում, քիչ փոխվում է, պայծառ ժպիտ դառնալ է ուղղում։ Բայց այդ ակամայ ժպիտը նման է սպառօրին, որ չէ հասնում իրանից արդէն վերջնականապէս երես չըռն տուած բաղդին, թէկուզ այդ քախտը իսկապէս վերադարձած լինի նրան երջանկացնելու։

Դեռ անցեալ տարի, երբ Նորին Մեծութեան

Ֆրիդլեր-ադիւտանտ իշխան Օրօյնսկին այստեղ էր, երբ երկրի կառավարչապետը գալիս գրեւոր էր, երկրաշարժից վնասված քաղաքացիներից շատերը մոտածում էին ճգնաժամից ազատվելու համար մի էական ելք գտնել։ Այս ու. այնտեղ խորհրդակցում էին թէ՛ քանի որ մեր բարեգութ Կայսրը այդքան մօտ է բնդուներ իր արտին մեր վիճակը, ինչդեռ Նորին Մեծութեան ներկայացուցիչներից, որ նրանք միջնորդեն երկաթուղու դէպի Շամախի բերվող ճիւղի իրագործման մասին, մասնաւոր որ այդ հարցը տարիներ առաջ յարուցված էր և արդէն կային ձեռքի տակ բոլոր հարկաւոր պաշտօնական նպատակաւ տեղեկութիւնները, նախահաշիւը և պլանը։ Ահա այդ գործը, որ համեմատաբար չնչին ծախս է պահանջում (1 1/2 միլիոն ռուբլի), մի ամբողջ աւերված քաղաք և գաւառ ոտքի կը կանգնեցնէ և դա կը լինի օգնութիւնների ամենաէականը, միայնակ և հաստատու, թէկուզ դրա համար հարկաւորվի ծախսել երկրաշարժից վնասվածների օգտին ժողովրդած գումարի մեծագոյն մասը։

Եւ ահա քաղաքի հաւատարմատարները խնդիրը տուին Թաքաւոր Կայսրի անունով իշխան Օրօյնսկուն։ Իշխանը խոստացաւ անել ինչ հնարաւոր է։ Խնդրի մէջ կային մանրամասն և ամփոփ տեղեկութիւններ երկրի բնակչութեան, ներմուծվող և արտահանվող ապրանքի քանակութեան, գծի ծախսի և տարածութեան մասին և այլն, բոլորը քաղված հիմնաւոր և հաստատուն աղբիւրներից։

Այս բոլորի հետեանքն այն է լինում, որ գործը Պետերբուրգից ուղարկվում է իշխան կառավարչապետին, իսկ վերջինս յանձնում է անդրկովկասեան երկաթուղուն և լեռնային վարչութիւններին, որոնք իրանց կողմից քնննելով, գտնում են գծի շինութիւնը հնարաւոր միայն ծրարվում է փոխանակ Նաւաի տանը, տանը Հայկ-Կարուկ կայարանը, որով գծի կրճատվում է 10—12 վերստ և փոխանակ առաջվայ նեղուղի ծրարքի՝ չինել լայն ու բոլոր շինութիւնները քայի փոխարէն փայտեայ շինել։ Այդ փոփոխութիւններից ծախսը մօտ 250 հազար ռուբլիով վերանում է։ Երկաթուղու կովկասեան զլխաւոր վարչութեան նպատակաւոր պատասխանը իր որոշած ժամանակին, յունվարի 16-ին, պիտի հասցրված լինէր կառավարչապետի գիւղանտանը։

Մեր գաւառապետը, որ այժմ բացակայ է քաղաքից, յունվարի 21-ին հեռագրում է իր օգնականին հետեւալը. «Ընտրաւորներից չաւասիցներին, երկաթուղու գծի գլուխ գաւառն մեծ յոյս կայ»։

Այս հեռագիրը պ. օգնականը չուկայում խուռն բազմութեան ներկայութեամբ կարդաց և չնորհաւորեց շամախեցիներին։

Ահա այդ ուրախութիւնն է, որ այժմ ամենաքի դէմքը մասամբ պայծառացել է իրանց պատահած մեծ աղէտի տարեդարձի չէմքում։ Սիրտը Սարգիսիւնիկեան

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎՍԿԻՑԻ

Յունվարի 26-ին

Ընթերցող, եթէ երբ և իցե ունեցել էք նըպատակ տեսնելու հայ կեանքի մօտաւոր պատկերը, եթէ հայ իրականութեամբ հետաքրքրվել էք, պէտք է այսօր լինէիք այստեղ, Մօսկվայի հայոց եկեղեցու խորհրդարանում, ուր կատարվեց տեղիս ծխականների ժողովը՝ մի վերին աստիճանի բնորոշ և հետաքրքրական հարցի առթիւով։

Մեր հոգեւոր հայրերը միշտ եղել են, են և անկասկած կը լինեն մեր շատ վերքերի պատճառը։ Արդէն ես հաղորդել էի «Մշակին», որ ճրագաւորյի երեկոյեան, երբ ժողովուրդը, մոռացած իր կեանքի ամենօրեայ մանր-մունք հոգսերը, խմբված էր եկեղեցում հոգեկան սփոփանք գտնելու համար, մեր քահանաներից մէկը, Նազարեան, քարոզ ասաց իր և իր պաշտօնակից քահանայի մէջ նոյն օրը պատահած խոսքութեան, կուի մասին...

Ահա այդ դէպքն էր այսօրվայ ծխականների ժողովի զննութեան տարական ժողովը, մասամբ չնորհի նախագահողի թուլութեան և հային յատուկ բնաւորութեան, նման էր մեր անկանոն իրականութեանը, մեր ժխտարման վայրկեանայ իրականութեանը... Առանց չափազանցութիւնների մէջ ընկնելու կարելի է ասել, որ հայ մարդիկ եկել էին իրանց կողմերից յոյժը չափելու համար... Գոռուն-գոռուն, աղղղալ, անկանոն զրուց, իրարանցում... ահա այդ ժողովի արտայայտութիւնը—կատարեալ կողորդարդոցութիւն։

Բայց, այնու ամենայնիւ, այդ աղմուկների անկանոնութեան մէջ խօսեցին մի քանի անձ-

նաւորութիւններ, ինչպէս, օրինակ, պ. Կուսկանց, Մամիկոնեան և Գասպարեան, որոնք և ունեցան ժողովում վճռական նշանակութիւն... Ձայների մեծամասնութեամբ որոշվեց յայտնել Մոսկուայի տօների քարոզչին հասարակութեան կառավարման Բացի այդ, որոշվեց կազմել մի մասնաժողով, որ պէտք է պարագլխի քահանայական գործերով, նրանց հասարակութեանից ստացվող եկամուտների կարգաւորութեամբ։ Այդ մասնաժողովը, որպէս ենթադրվում է, վերջ պիտի տայ այն բազմաթիւ խոսքերի հայ քահանաների մէջ չնորհի այն հանգամանքի, որ դրանք, այդ քահանաները, չեն վարձատրվում հաւատարմապէս Գահանաներին պատկանելի եկամուտները հաւաքվելու են յիշեալ մասնաժողովի ձեռքով և հաւատարմապէս բաժանվելու են քահանաների մէջ։

Մօսկվայի եկեղեցու ծուխը երկու մասի բաժանվում է հարցը, սակայն այդ հարցը խեղդվեց դրան հակառակ ձայների մեծամասնութեան մէջ։

Հ. Համբարձումեան ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Տաթև, յունվարի 17-ին

Թող տուէք, ինչդեռ, Վշակին միջոցով խորին չնորհակալութիւն յայտնել պ. Ալեքսանդր Մէլիք-Ազարեանին, որ բարեհաճել է նուրբի Տաթևի հազարամեայ վանքի, իր նախնիների փառաւոր յիշատակի ներքի նորոգութեան համար 2000 ռուբլի։

Նաև չնորհակալութեամբ ստացել եմ հետեւեալ նուէրները. պ. պ. Լիւզովի Թ. Սերգէյեւից 200 ռուբլի (նախկինի հետ 500 ռուբլի), Սերգէյ Տ. Միսաեանից 50 ռ. (նախկինի հետ 125 ռ.), Մանուէլ Աւագեանից՝ 25 ռ., Բախչի Էլիշիւից 10 ռ., Մարգարիտ և Շահ-խանում Տէր-Ասատուհաններից՝ 9 ռ., Եփրեմ Յարութիւնեանից՝ 11 ռուբլի, Շահնազար Յակոբեանից՝ 5 ռուբլի, գործերից Բաբայան-նեանից և Գրիգորեանից 12 ռ., Հոսիսիւմի Տէր-Յովհաննիսեանից մի ինքնատեղ, աղիւղուցի Ալեքսան Գասպարեանից՝ մի մեծ շղթայ գարեթի համար։

Վանասայր՝ Ն. Վ. Մէլիք-Թանգեան

ՆԵՐՔԻՆ ԱՌԻՐԵՐ

Փետրվարի 1-ին կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան փոխ-նախագահը, հիմնվելով նոյն ընկերութեան շնչահանուր ժողովի որոշման վրա, դիմեց Ֆինանսների մինիստրին խնդրելով վերադառնալ 1903 թվականի ընթացքում այն մաքսանշարը, որ առկում է արտասահմանից բերել տրվող հակակարկտային թշնաթանթներից՝ հեշտացնելու համար այդինների և ցանքների պաշտպանութեան գործը կարկուտից։ Այս միջնորդութիւնը յարուցվում է այն պատճառով, որ արտասահմանեան հակակարկտային թշնաթանթները գերազանց են ուղեւորներին նոյն տեսակի թշնաթանթներից թէ իրանց պարզ կազմութեամբ, թէ էժան գնով և թէ գործածութեան եղանակի հեշտութեամբ և ապահովութեամբ։

Կիրակի, փետրվարի 2-ին, տեղի ունեցաւ Պետերբուրգից եկած մի նոր դերասանուհու, այն է Կոմիտասի ընկալանքի առաջին ներկայացումը։ Յայտարարութիւնների և նախօրօք տպված գովասանքների հիման վրա, բոլոր տոնավերները ներկայացումից երկու օր առաջ վաճառված էին։ Հանդիսականների մի մասը նստել էր երաժիշտների տեղում և միջանցքներում Կոմիտասի ընկալանքի գուրս եկաւ Պոտապկոսի «Волшебная сказка» պիէսում, որ ներկայացվեց ներկայ սեզօնում և հայոց բնի վրա «Դիւթալան» աշխարհ՝ անունով։ Առաջին և երկրորդ գործողութեան մէջ նա առանձին տպաւորութիւն չը գործեց և միայն տեղ-տեղ չարժեք առանձին հետաքրքրութիւն։ Սակայն երրորդ գործողութեան վերջում դերասանուհին ցոյց տուեց հազարի կարող խեղճութեամբ և տանջված սրտի բռնու գրգռի, յուսահատական ձիւ և ցասմունքի բողբոջ Կոմիտասի ընկալանքի խաղում է մտածված, զգացմունքով, արտասահման է պարզ, արտայայտիչ, լսեցնելով իր խօսքի ամեն մի բառը։ Բայց չափազանց շատ

է չեղում ամեն մի բառի վրա և ընդդռւմ իւրաքանչիւր մի վանկ։ Լիակատար կարծիք կազմելու համար պէտք է տեսնել նրան միւս պիէսներում։ Դերասանուհու հետ եկած խումբը կատարում է իր դերը բաւարար։

Թուրքեստանի գեներալ-նահանգապետը մի հեռագրով յայտնում է գինւորական մինիստրին, որ Ֆէրգանի նահանգապետի կողմից նշանակված մասնաժողովը, որի նպատակն էր պարզել Անդիշանի երկրաշարժից առաջ եկած վնասները, գտել է, որ այդ երկրաշարժից Անդիշանի գաւառում սպանվեց ընդամենը 4,358 և Մարգարիտի գաւառում 285 հոգի։ Գոյքերի և նիւթական զանազան կորուստների արժէքը հասնում է մօտ տասն և մէկ միլիոնի։

Մինչև այժմ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան իշական գիմնադրանքում ուսման ընթացքը աւարտելու ժամանակ մեզ գտնելով պարզաւորվում էին միայն այն աշակերտներին, որոնք վկայականներում (ատտեստատներում) ունէին թւանշաններ բոլոր առարկաներից։ Այժմ մինիստրութիւնը բացատրեց, որ թւանշաններ չունենալը ոչ-պարտաւորական առարկաներից, օրինակ նոր լեզուներից մէկից, կամ կրօնագիտութիւնից ոչ-քրիստոնեայ դասաւորութեան պատկանող անձանց համար, չէ կարող արգելք լինել մեղաւորութեան պարգեւատրելուն։

Փրանսիական լրագիրները հաղորդում են, որ Մակսիմ Գորկիյ աւարտում է մէկ պիէսա, «Հրէսայ» անունով։ Նա արդէն կարդացել է մի քանի նշանաւոր հատուածներ իր պիէսայից իր բարեկամներին, որոնք հիացած են այդ գրուածքի արտիստիքական ոյժից և մարդասիրական տեղեկանքիաներից։

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ Ֆինանսների մինիստրութեան մէջ հարց է բարձրացրած չարժական ուսումնարանների կազմակերպելու գործարանական բանուորների համար։

«Донец. Ръкъ» լրագրին հաղորդում են, որ Պետերբուրգի երդուեալ հաւատարմատարների խորհուրդը մշակել է մի ծրագիր փառաբանների վարձատրութեան մասին։ Մրագրի մէջ որոշված է վարձատրութեան այն ամենաբարձր չափը, որից աւելի իրաւունք չունեն պահանջել փառաբանները իրանց կրիչանքներից։

Ռուսաց օպերային խումբը, որ իր ներկայացումները տալիս էր բանկային թատրոնում, կերակրի, փետրվարի 2-ից սկսեց իր ներկայացումները Թիֆլիսի արտաւորական թատրոնի դահլիճում։ Այդ երեկոյ ներկայացում էին Արցիբալդայի բենեֆիտին Ռուբինշտեյնի «Դէմ» օպերան։ Թէ համակրելի երգչուհու բենեֆիտը, թէ թատրոնական դահլիճը գրասել էին մեծ հասարակութիւնը Արցիբալդայի Թատրոնայի դերը կատարեց իրան յատուկ տաղանդով, Դէմ մօնի դերը աղողութեամբ կատարեց Պրիմաձօնի, որը իտալերէն էր երգում։ Բենեֆիտիանտը ստացաւ մի քանի ընծաներ և ծաղկափայլեր։

Հայլէի համալսարանը, մայրաքաղաքի լրագիրների խօսքով, ոսկէ մեդալ չորհեց Կայսերական գինւորական բժշկական ակադէմիայի պրոֆէսոր Ի. Պ. Պալլովին ֆիզիոլոգիայի վերաբերեալ նրա նշանաւոր աշխատութիւնների համար։ Պրոֆէսոր Պալլովի գրուածքները արդէն համալսարանային հոգեւոր և վայելում և թարգմանված են եւրօպական համարաւոր բոլոր լեզուներով։

ԱՍԽԱՐԱԳԻԹ մեզ գրում են. «Ասխարադի հայ կանանց Բարեգործական ընկերութիւնը մտադիր է մօտ ապագայում իր տարեկան «Հայկական երեկոյթի» տայ, որի համար կարծեմ նախապատրաստութիւններ արդէն տեսնվում են»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Բերլին, փետրվարի 5-ին

Ահա մի քանի մանրամասնութիւններ էլ փետրվարի 2-ի հայկական երեկոյթի մասին։ Բրանդէսի դասախօսութիւնը, որի վերնահերթն էր Armenien und Europa, հայկական կեանքի ու գրականութեան խորը ուսումնասիրութիւնն էր և չէր էլ կարող լինել, քանի որ նա հայագէտ չէ և առանձնապէս էլ հայ

կական կեանքով չէ զբաղվել, բայց այն բոլորը, ինչ նա կարողացել էր կարճ ժամանակում գրաւոր և բանաւոր աղբիւրներից տեղեկութիւններ հաւաքել, համարեա բոլորն էլ ստույգ էր և նա հաղորդում էր մի առանձին համոզմամբ և ոգևորութեամբ, մի ոգևորութիւն, որ իր հետ միացնում էր նաև հիացման զգացմունքը: Հայ ժողովուրդը այստեղ միայն այն ոտաւորովի ու մուրացկան գաղթականը չէր, ինչպէս զօկտօր Ռօբբալը ներկայացրեց իր դասախօսութեան մէջ, այլ մի կուլտուրական ժողովուրդ, որ ունի իր անցեալն ու ներկան: Մի ազգ, որ հազար տարուց շատ առաջ ծագած գրականութիւն է ունեցել, հարուստ պատմագրութիւն, յանձին ինքնապատկեր, եղիշէի, Լատիններուց և ուրիշների: Մի ազգ, որ ամեն ազգերից առաջ քրիստոնէութիւնը իրեն պետական կրօն է ճանաչել: Իսկ այդ ազգի հայրենիքը այն անվրդի անապատները ու լեռն ժայռերը չեն, ինչպէս կրկին զօկտ. Ռօբբալն էր ներկայացնում, այլ մի երկիր, որին Ասիական Շվեյցարիա անունը տուեց, մի լեռնոտ աշխարհ, բայց պտղաբեր, որի ամեն մի քարի տակից մի աղբիւր է վազում:

Անուշեռն դասախօսը յիշատակեց հայկական դիմաւորանքի անունները և նրանց տիրապետութեան ժամանակամիջոցը, ինքնապատկեր տեղեկացումը: Բազմաթիւ հայացում հրէական համարելով, թաթարները և սելջուկները ներքին արշաւանքները մինչև թիւրքաց տիրապետութիւնը: Բայց խոզկայոյ միջնադարում անգամ հայ ժողովուրդը իր գոյութիւնը պահպանեց և իր գրականութիւնը ունեցաւ: Նա երթաւայր լինելով ամեն տեսակ հալածանքների, չորհրդացու, այլ տոկաց ու համբերեց, պահելով իր լեզուն ու ազգային առանձնատկութիւնները: Իսկ նրա ժողովրդական երգերը, ոչ մի ազգ չունի այդպիսի պարզ սիրուն, բայց և իմաստալից ժողովրդական երգեր, աւելացրեց պրօֆէսորը:

Արհեստների ու վաճառականութեան ստպարէզում հայերին պատուաւոր տեղ տալուց յետոյ, ցոյց տուեց, որ հայերը ամեն սապարէզի համար ընդունակութիւններ են ունեցել և խոշոր ներկայացուցիչներ տուել, ինչպէս Լօրիս-Մելիքեանը գինորական սապարէզում, Միլիթարը գրական սապարէզում և այլն: Ապա ծանրանալով հայոց նոր կեանքի և գրականութեան վրա, աշխարհագրորդ ծնունդը ներկայացրեց, զորին Եւրոպայում ուսած և հայրենիք դարձող հայերի, Կ. Պօլսի և ռուսահայոց մտաւոր շարժումները, առաջինը համարելով Ֆրանսիական գրականութեան ազդեցութեան արդաւոյթ, իսկ երկրորդը ռուսական բռնակցի և գերմանական սօցիալական գաղափարների: Ցոյց տուեց վիպականութեան ծաղկումը մեր մէջ, ամենալաւ ներկայացուցիչը Րաֆֆին համարելով, յիշատակելով մի քանի խօսք նաև նրա «Ջալալեդդին» վէպի մասին:

Պատկերով հայոց մասին, ի հարկէ անկարելի էր լինէր, եթէ յարգելի դասախօսը չը յիշատակէր Բերլինի դասախօսի 61 յօդուածի մեծածառ մտաւոր և լիբերալների ներկայ անմիջական կացութիւնը: Հէնց իր դասախօսութեան սկզբից, հանդիսականների ուշադրութիւնը լարելու համար, վերջին տարիների կոտորածներով սկսեց նա իր խօսքը: Ամենավաղ գոյնբոլով նկարագրեց այն բոլոր վայրագութիւնները, որ գործ են գրվել հայի ընտանական սրբութիւնը խախտելու, առեւելի տանականների բոլոր տեսակները, որ գերմանացիները զուգէ գոտար երկակայն կործանար:

Իրօք այսպիսի նկարագրերն միայն արեւելցու ջղերն են, որ տանում են: Իսկ եւրոպացիները անպիսի քստմանի նկարագրութիւններ լսելու համար ջիղեր չունեն. պէտք էր տեսնել թէ ինչպէս հանդիսականներից շատերը, մանաւանդ կանայք, իրանց նստած տեղում ջղաձգվում էին ու գալարվում, նրանք փակում էին իրանց ականջները և անքաւակա՛նութեամբ բողբոջում էին իրանց մօտ նստող հարևաններին դասախօսի անտակտութեան գէտ: Շատ կանայք վերկայացան և ուրիշ սենյակ վազեցին, այլ ևս չը լսելու համար: Իսկ դասախօսը մի և նոր ստանալով իրենց և կարծէք աւելի վիշտ պատճառելու համար փափկասուններին, շարունակեց իր նկարագրութիւնները մինչև իր վը:

Երբ ինչ որ ասելու էր այդ անուր տանականների մասին, առաջ, վերջացրեց, բարձրացնելով իր ձայնը հանդիսականներին հետևեալ խօսքերով. «Տիկիներ և պարոններ, գիտե՛մ ես, էլ բաւական է, ասում է՛ք դուք ինձ, էլ չենք ուզում լսել: Գիտե՛մ իմ պատմածները հանելի չէին ձեզ համար, դուք փակում է՛ք ձեր ականջները, դուք հեռանում է՛ք:

Բայց մտածեցէ՛ք մի բօլէ, որ այն, ինչ որ լսել լսեցի անգամ անտանելի է ձեզ համար, հարկէր հազարաւորներ տանում են իրապէս և այս բոլորը իրանց կալու վրա գրում և ալը կատարվում է մեզանից մի քանի օր միայն հեռաւորութեան վրա: Ապա չը քաշվեց նաև պատմական գերմանացիների անտարբերութիւնը և յանձին իր կայսրի սուլթանի հետ ունեցած սերտ բարեկամութիւնը: Իր դասախօսութեան վերջում մի յորդոր կարդաց, հայցելով գերմանացիների բարի տրամադրութիւնը և բարեհայեցողութիւնը գէպի այդ ճնշված ազգը:

Բայց յարգելի պրօֆէսորի գերմանական քաղաքականութեան և կայսրի տուած ապտակի Գերմանիայի չօլիսիստ մամուլը չէր կարող տանել, մանաւանդ որ այդ խօսքերը արտասանողը մի դանիացի էր և ազգով էլ հրէայ: Ուստի հէնց վերաբարի 3-ին ազատամիտ օրգան «Vossische Zeitung», չը կամենալով նորն իսկ հռչակաւոր Բրանդեմի անունը տալ, առաջ, որ Դանիայից եկած մի ինչ որ պարոն ընտի վրայից յանդիմանում է գերմանացիներին, եթէ այդպիսի մի բան Դանիայում կամ Անգլիայում լինէր, հանդիսականները դասախօսի վրա նստած ինձորներ կը շարտէին, իսկ գերմանացիները այդ չէն արել և հէնց այդտեղից էլ երևում է նրանց լատելութիւնը, բացի այդ՝ ոչ մի եւրոպական ազգ այն չէ արել հայերի համար, ինչ արել են գերմանացիները: Այստեղ յօդուածագիրը յիշատակում է Թիւրքիայի մի քանի գերմանական որբանոցները, որ ամեն անգամ, որպէս մարդասիրական մի մեծ գործ, հայոց աչքն են կործում:

Բացի Բրանդեմից երեկոյթին մասնակցում էին նաև Բերլինի նշանաւոր գեղարուեստագէտներից՝ յայտնի Հելմտ Անտօն Հեկկինգը, պալատական երգիչ Քեմօնեքէն, երգչուհի տիկին Հէյման Էրզել և օր. Ռայխերը, որ արտասանեց Գամա-Քաթիբայի «Արաքսի արտատուէր» և «Հազարից մէկը» ոտանաւորների գերմանական թարգմանութիւնը:

Երգիչների մի ստուար խումբ, կազմված հայ, ռուս և հրէայ ուսանող ուսանողներից, երգեց մի քանի հայերեն քառածայր երգեր ուսանող Լ. Նազաբեանի ղեկավարութեամբ: Ներկայ էր մեծ բազմութիւն, ինչպէս նաև աչքի ընկնող անճաւորութիւններ—Բերլինի քաղաքացիները, պարսից դեսպանի փոխանորդ Յովհաննէս խան Մասնեմարը, յայտնի գրատպուող Զուդերմանը, պրօֆէսոր Լիմանը, Ֆեօստերը, Կայզերը և ուրիշները, ինչպէս նաև տիկին Երզնէ Թրապանը, հիւրեր Դանիայից և գերմանական խաղաղութեան ընկերութեան տեղական անդամ պրօֆ. Հերտերը, որ և երեկոյթը բաց արեց:

Sch.

ՆԱՄՍԿ ՊԱՐԿԱՍԱՆԱԻՑ

Սարմատ, զեկտեմբերի 1-ին
Այսօր Սաւրա գիւղում տեղի ունեցաւ գրական և գեղարուեստական երեկոյթ, գիւղի ուսուցիչ պ. Արշակ Զիթախանի ղեկավարութեամբ:

Ներկայացրվեցին երկու վոդևիլ, որից յետոյ մանրիկ, բայց ազգուստանաւորներ կարգացրեցին: Իսկ երգերի թողած տպաւորութիւնը չեն կարող նկարագրել, որովհետև առաջին անգամն էր, որ Սաւրայում լսվեց կանոնաւոր երգեցողութիւն:

Երգեցիկ խումբը բաղկացած էր 50 աշակերտներից և աշակերտութիւններից: Մեղ համար նորութիւններից մէկն էլ աշակերտ-աշակերտների միաձև հաղուստն էր:

Երեկոյթի վերջում վարագոյրը բարձրացաւ և ուսումնարանի աշակերտութիւններից մէկը, հրէշտակային տարագով, բնագաւան ճրագների լոյսի մէջ, շնորհաւորեց հանդիսականներին ճորտ տարին և անշարժ մնաց մինչև 5 րօպէ, որից յետոյ նոր հրէշտակագետ օրիորդը բաժանեց քաղցրաւորները դպրոցի աշակերտներին և աշակերտութիւններին:

Երեկոյթը վերջացած էր, հանդիսականները չէին կամենում հեռանալ թատերաբանից. պ. Արշակ Զիթախան ընտ բարձրացաւ, յայտնեց իր շնորհակալութիւնը ներկայ եղողներին, ապա աւելացրեց. «Եթէ դուք չէք խնայի ձեր գրամական օգնութեամբ ապահով վիճակի մէջ պանի ձեր դպրոցի տնտեսականը, այսպիսի երեկոյթներ, հանգիստի շատ կը տեսնէք...» Բուռն ծափահարութիւններ Ապա յայտնեց իր արհամարհանքը այն «աղաներին», որոնք դուրսը մեծ-մեծ խօսել գիտեն, իսկ այժմ իրանց բացակայութեամբ միանգամայն ապացուցին իրանց ձակատի վրա կնքված «Քաւոր Պետրոս»:

մի հարազատ զաւակներ լինելը
Մենք յոյս ունենք, որ պարոնի ասածները կենդանի արձագանք կը գտնեն մեր ժողովրդի սրտում և նրանք կը սիրեն դպրոցը և կը ճանաչեն նրա անգնահատելի մեծութիւնը:
Մենք ևս յայտնում ենք պ. Զիթախանին մեր խորին շնորհակալութիւնը և ցանկանում ենք աջակցութիւն առաջ տանելու իր սիրած գործը:

Ականատես

ԱՐՏԱՔՈՒ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պօլսից «Русск. Вѣд» լրագրին գրում են. «Հայոց պատերազմ Օրմանեանի կեանքի դէմ փորձ անելու շարժառիթը, լուրերին նախելով, համարում են այն, որ պատերազմը հրաժարելից միջնորդել՝ ազատելու բանտից երիտասարդ յանցաւորի եղբորը, որի մասին վերջինս ինդրում էր պատերազմից: Թիւրքաց ոստիկանութիւնը շարժառիթում է իր ձերբակալութիւնները և քանտարիւնում է մարդկանց ամենաչնչին կտակածի հիման վրա, յաճախ մինչև անգամ ոչ ըրեց չը ստուգված մատնութիւնների հիման վրա: Հայերը, իսկ վերջին տարիները բոլոր—մասկեղծագիտական նոյնպէս յաճախ ոստիկանական այդ կարգերի գոհ են դառնում: Տեղական լրագրիներին արգելված է որ և է բան հաղորդել պատերազմ Օրմանեանի կեանքի դէմ արած փորձի մասին: Բայց նրանք արտասանաւոր հաղորդում են, թէ ինչպէս ամեն օր պատերազմին այնչեղութիւն են գործում գոնազան անձինք, օրինակ ներքին գործերի միջնորդ Մէլքոն փաշայ, բոլորական Եկզարիւր, յոյն միտոպոլիտները և այլն: Սակայն հայաձայն երկրիցի, մինչև անգամ այդ գէպում լրագրիները աւելացնում են իրանցից, որ այդ բոլոր անձինք այնչեղցին պատերազմի Գրիստոսի ծննդեան և նոր տարվայ տօները շնորհաւորելու համար: Ուշացած շնորհաւորութիւնները:

—Հայոց պատերազմ Օրմանեանի կեանքի դէմ փորձ անող Յովսիփ գործի վերաբերմամբ թիւրքաց ոստիկանութիւնը այլ կերպ է դատում: Սկզբնական քննութիւնից յետոյ իր թէ պարզվել է հեռեկանը: Յովսիփը, նրա գործակից Պօղոսը, որը նորեւթ Եգիպտոս փախաւ, և հինգ ուրիշ երիտասարդներ, որոնք այժմ կայմաւորված են, կազմեցին հայկական կոմիտէ, որը ոչինչ կապեր չունէր Լօնդօնում, Պարիզում և Ժնևում: Գոյութիւն ունեցող ուրիշ հայկական կոմիտէներից հետո Յովսիփը և նրա համախոհները յոյս ունենալ սպանալիքների միջոցով գրամական մեծ միջոցներ ձեռք բերել հայկական շարժումը կազմակերպելու համար: Կալանաւորներից կազմ ընկալիները բոլորն էլ մի և նոյն ամբիկական սխառնի են: Նոյնպիսի ընկալիներ էին գործածում հայկական շարժման արագութիւնները 1895 և 1896 թւերին:

—Ժրնէվից հաղորդում են «Daily Expresse» լրագրին, որ տեղական մակեղծական կոմիտէներ վերջին օրերն առանձին գործունէութիւն է ցոյց տալիս: Կոմիտէն գործակալներ է պահում Բոլշաքիայի և Մակեդօնիայի բոլոր նշանաւոր քաղաքներում և նրանց միջոցով տեղեկութիւններ է հաղորդում գլխավորապէս կարճ շրջաններին Մակեդօնիայում թիւրքերի գործած անգլութիւնների և ճնշումների մասին: Այդ միջոցով յոյս ունեն հասարակական կարծիքը զարթեցնել Եւրոպայում և պատերազմ առաջացնել: Թիւրքացիները Թիւրքաց կառավարութիւնը իր կողմից բոլոր միջոցներ ձեռք է առնում ագիտացնելու դէմ կեցող համար: Ժրնէվում սուլթանի գործակալները ուշադրութեամբ հետեւում են մակեղծական ագիտատարներին և ամեն օր մանրամասն գեկուցումներ են ուղարկում Կ. Պօլսին:

—Յորմանական լրագրիները հաղորդում են, որ բոլոր կուսակցութիւններին պատկանող մարդկանցից կազմված մի խումբ մտադրութեան ունի կազմակերպել մի միութիւն՝ ի նպաստ Հայաստանի և Մակեդօնիայի ճնշված ազգերի:

—Վերջին օրերն Կ. Պօլսում մինչև անգամ բարձր չընթանալու յամառութեամբ լուր է պատում, որ նախկին մարշալ Պուալո-փաշայ փախել է Դամասկոսից, ուր նա բանտարկված էր, Եգիպտոս:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍՍԻՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

2 փետրվարի

Լիվերպոլի: Բալֆուր հաղորդեց Լանդօնու նից ստացած տեղեկութիւնը, որ վենեցուէական հարցի վերաբերմամբ գիտութիւնները վերադարձ են Գերմանո-անգլիական արձանատուութիւնն ընդունվելոյ Արդիւններ չը կան հարցը վերջնականապէս կարգադրելու համար: Մէլիլիկ, Թեկնածուին աջողից ներս խուժել Յից, ուր անգլիացիներ մի քանի ժամ հետևելով օրը տեղի ունեցաւ պատերազմ, որի ժամանակ իր թէ սուլթանի զօրքերը ջարդվեցին, կորցրին մի քանի թնդանօթներ և ստիպված էին յետ քաշվել: Գէպի մէջ Կարիւնները Մէլիլի չընկան: Եւ իր թէ նամակ

ստացան Թեկնածուից, որի մէջն առաջարկում է բռնել Մօլէյ-Արաֆին:

Նիւ-ԵՕՐԿ. Հիւսիս-արեւմտեան երկաթուղիները համաձայնեցին ճրիպպէս փոխադրել ուստի պաշարների ընտելներ, որ ուղարկում են նահանգներում ապրող ֆինները կարիքին ենթակայ բնակիչներին Ֆինլանդիայում:

ԼՕԴՉ. Հրէական բարեգործական ընկերութիւնը կը կառուցանէ ապաստարան խելագարների համար: Որոշված է տալ 100,000 բոբլի: ՏԱՆԺԷ. Ապստամբները կատարելապէս ջնջված են:

Կ. ՊՕԼԻՍ. Սուլթանի յատուկ հրաւերով, հայոց պատերազմ Օրմանեան ընդունվեց ռուս-կնդրութեան Սուլթանը ցաւակցութիւն յայտնեց Օրմանեանի կեանքի դէմ փորձ անելու օրիշով: Օրմանեան մասնացոյց արեց հայ ժողովրդի հատարմութեան վրա գէպի սուլթանը և ինդրեց ի կատար ածել բոլոր չիւրագործված իրադէները: Սուլթանը խոստացաւ համապատասխան հրահանգներ տալ մեծ-վիզիրին:

ԼՕՆԴՈՆ. Քէյտերի գործակալութիւնը իմացել է, որ դաշակից նուաւորները հրամանատարները վենեցուէական ջրերում, ըստ երեւթի, հրամանագրութիւն ստացան պաշարումը դադարեցնել:

ՍՕՅԻԱ. Պետական արտակարգ դատարանը սկսեց Տօգօրօյի և Իվանչօյի կարիւնները նախկին միջնորդների քրէական գործի քննութիւնը, որոնք մեղադրվում են սահմանագրութիւնը խախտելու և իշխանութիւնը ի չարը գործ գնելու համար շահաւորական նպատակով: Միջնորդները խորհուրդը վճռեց, իւստի նախագահութեամբ—ոչինչ մօրիթագիւր չը ձեռնարկել և ամենախիստ միջոցներ գործադրել մակեղծական կոմիտէների դէմ և սահասարակ բոլորական սահմանը խախտողների դէմ:

ԲԵՐԼԻՆ. Գերմանա-վենեցուէական արձանագրութեան բովանդակութեան մասին «(Nord-deutsche Allgemeine Zeitung)» հաղորդում է, որ վենեցուէական պարտաւորվեց վճարել առաջին կարգի պահանջի համեմատ 1,718,000 ռուբլով անյապով, մասամբ առձեռն, մասամբ էլ երաշխաւորված մուրակներով: № 21 արձանագրութիւնը հիմնաւոր է ճանաչում: Գերմանիայի բոլոր այլ պահանջները ճշգրտեամբ այդ վերջինները կորոշվին խառն յանձնագրովի ձեռքով, որ բաղկացած կը լինի մէկ գերմանական և մէկ վենեցուէական ներկաւորացուցից: Եթէ յանձնագրովի անդամները կարող չեն լինի համաձայնութեան զալ, այն ժամանակ հարցը կը վճռէ միջնորդ դատարանը, որ կը նշանակէ Բուզվելո, որպէս երաշխաւորութիւն կը ծառայէ 80%, որ վերջվում է Լազուայում և Պորտօ-Կարլլօում մաքսային տուրքերից, որը ընդամենը տալիս է տարեկան 51/2 միլիոն թօլլար: Այն հարցը, թէ որքան այդ երաշխաւորութիւնները յարմար են պաշարվողների և ուրիշ պետութիւնների համար, կը լուծէ Հաալայի միջնորդ դատարանը, եթէ չը կայանայ համաձայնութիւն ուրիշ ճանապարհով: Գերմանական պարտաւորվում է իր հինգ պրօցենտական փոխառութիւնը, որը մեծ մասամբ գտնվում է գերմանացիների ձեռքում, կառնաւորել միաժամանակ նրա արտաքին պարտքի հետ միասին, սակայն ի նկատի կառնվին գերմանա-վենեցուէական երկաթուղիների գլխաւոր ընկերութեան պահանջները:

ԼՕՆԴՈՆ. Այստեղի լրագրիները հեռագիրներ համաձայն, Չէմբերլէին ցոյց տուած ընդունելութիւնը Գրասֆէյնտում, որ հօլլանդական ազգաբնակչութեան կենտրոնատեղն է, խառն ընաւորութիւն ունեն «Standard» հաղորդում է, որ Չէմբերլէին գտնի մնաց ընդունելութիւնից: Երկպառակութիւնը հօլլանդացիների և անգլիացիների միջև Գրասֆէյնտում կատարել է: Ամբիկանդերների դաշակցութիւնը ամենագործող է և գործում է բոլիօս սաղքել օրինականների դէմ: Շէպլերի նախկին կողմնակիցները փողոցներում աշխարայ կրում են յեղափոխական նշաններ:

Ֆէլդմարշալ Սիմօն վախճանվեց:

ՍՕՅԻԱ. Միջնորդների խորհրդի վճռի համաձայն, գիշերը փակվեցին մակեղծական բուրդ կոմիտէները, այստեղ և գաւառներում: Այն հարցադրումին, թէ ճիշդ է արդեօք, որ կառավարութիւնը կարգադրեց փակել նրանց և ձերբակալութիւններ կատարել, միջնորդ-նախագահը պատասխանեց, որ միջնորդութիւնը որոշել է անողորմ կերպով հայաձեղ կոմիտէները և մակեղծական ագիտատարները բոլորական հողի վրա: Նա մինչև վերջը կը կատարէ իր պարտքը:

